ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1963 Общественные науки

Ռ. Գ. Սահակյան

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՍՈՎԵՏԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Վերջին տարիներին Արևմուտքի երկրներում և հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում լույս տեսած քաղաքական ու պատմական դրականության մեջ զգալի տեղ է հատկացված հետպատերազմյան ժամանակաշրջանի սովետա-թուրքական հարաբերությունների տարբեր հարցերին։ Բուրժուական հեղինակների նման հետաքրքրությունը պատահական չէ։ Այն բացատրվում է նրանով, որ Թուրքիան կոչված է ԱՄՆ-ի ստրատեգիական պլաններում «առանձնահատուկ» դեր կատարելու։ Այստեղից էլ ամերիկյան բուրժուական պատմաբանների փորձերը՝ պաշտպանելու վերջինիս քաղաքական կուրսը և խեղաթյուրելու նրա նկատմամբ Սովետական Միության վարած արտաքին քաղաքականությունը։

Միևնույն ժամանակ Թուրքիայում, ինչպես նաև ԱՄՆ-ում հրատարակված իրենց աշխատություններում թուրք հեղինակները ջանք չեն խնայում իրենց «մեծ դաշնակցին» գովաբանելու, իսկ ՍՍՌՄ-ի արտաքին քաղաքականությունը աղավաղված տեսքով ներկայացնելու համար։

Սույն հոդվածի նպատակն է փաստական նյութի հիման վրա քննական վերլուծության ենթարկելով հետպատերազմյան շրջանի սովետա-թուրքական հարաբերությունները, վեր հանել և մերկացնել դրանց միտումնավոր, հակապիտական լուսաբանումը ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ։

* * *

Թուրքական կառավարող շրջանները, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին վարած իրենց արտաքին քաղաքականությամբ մեծ ծառայություն մատուցեցին ամենահետադիմական իմպերիալիստական խմբավորմանը՝ «առանցքի» երկրներին և, այդպիսով, ֆաշիստական ստրկացման վտանգի դեմ մարդկության առաջադեմ ուժերի մղած պայքարում ամոթալի դեր խաղացին։

Ամենահետագիմական և ագրեսիվ իմպերիալիստական տերություններին աջակցելու թուրքական քաղաքականությունը մի այլ ձևով դրսևորվեց պատերազմից հետո, երբ Թուրքիայի ղեկավար շրջանները, վճռականորեն կողմնորոշվելով դեպի մի նոր ագրեսիվ մեծ տերությունը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, շատ կարճ ժամանակում երկիրը ծառայեցրին նրա հետապնդած հակասովետական ագրեսիվ նպատակներին ու գաղութատիրական ձգտումներին՝ Մերձավոր ու Միջին Արևելքի շրջանում։

Ինչո՞ւ Թուրքիայի կառավարող շրջանները շրջվեցին հատկապես դեպի ԱՄՆ-ը և ոչ թե դեպի մի որևէ այլ իմպերիալիստական տերություն։

Մեր կարծիքով, դա պետք է բացատրել հետևյալ պատճառներով.

ԱՄՆ-ը ամենաուժեղ կապիտալիստական երկիրն էր, որը պատերազմից դուրս էր եկել ավելի հզորացած և անչափ հարստացած։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի հետադիմական շրջանները սկսել էին մի նոր պատերազմի նախապատրաստվել՝ Սովետական Միության դեմ և Թուրքական կառավարողները հույս ունեին նրանց օգնությամբ հասնել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ձախողված իրենց սեփական հակասովետական պլանների՝ տերիտորիալ հափշտակումների ու պանթուրքական ծրագրերի իրականացմանը։

Միայն ԱՄՆ-ի օգնությամբ էր հնարավոր ճնշել դեմոկրատական շարժումը երկրի ներսում և իշխանությունը պահել իրենց ձեռքում։

Այսպիսով, չհրաժարվելով իրենց հակասովետական դիրքորոշումից, Թուրքիայի կառավարող շրջանները սկսեցին հանդես գալ ԱՄՆ-ի իմպերիալիստների հակասովետական պլանների օգնակում։ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում ընթացել է երկիրը ամերիկյան իմպերիալիզմի ազդեցությանն ենթարկելու ուղղությամբ, որի հետևանքով Թուրքիան ակտիվ մասնակցություն է ունեցել ԱՄՆ-ի կողմից նախաձեռնվող բոլոր ագրեսիվ խմբավորումներում, որոնք ուղղված են ինչպես Սովետական Միության ու սոցիալիստական ողջ լագերի, այնպես էլ Մերձավոր Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումների դեմ։

1947 թ. մարտի 12-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը դիմեց կոնգրեսին մի ուղերձով՝ պահանջելով 400 միլիոն դոլար՝ Թուրքիային և Հունաստանին օգնություն ցույց տալու համար։ Այս ուղերձում, որը հայտնի դարձավ «Տրումենի դոկտրինա» անունով, ընդգծվում էր, որ եթե Թուրքիայում ու Հունաստանում ժողովրդական լայն զանգվածների ճնշման տակ փոփոխություններ կատարվեն, դրանք կարող են «տարածվել ամբողջ Միջին Արևելքի վրա»։ «Տրումենի դոկտրինայի» համաձայն, 1947 թ. հուլիսի 4-ին Թուրքիան ԱՄՆ-ի հետ կնքեց համաձայնագիր «օգնության» պայմանների մասին, որին հետևեց ամերիկյան առաջին վարկը Թուրքիային՝ 100 մլն դոլարի չափով։ Այս գումարը, ինչպես և հետագայում ստացված «օգնությունները» Թուրքիան ամբողջովին օգտագործեց ռազմական նպատակներով՝ 18,5 մլն դոլար ցամաքային զինված ուժերի վրա, 14,5 մլն՝ ռազմա-ծովային ուժերի, 27 մլն՝ ռազմա-օդային ուժերի, 5 մլն՝ ճանապարհների շինարարության և 5 մլն՝ զինանոցի վերակառուցմանը։

Թուրքական կառավարող շրջանների վարած երկրի ռազմականացման քաղաքականությունն ամենևին էլ չէր բխում թուրք ժողովրդի շահերից, ընդհակառակը, այն մինչև վերջը վնասաբեր, Թուրքիայի ազգային շահերին հակասող քաղաքականություն էր, որը նրանք փորձում էին ներկայացնել, որպես միակ հնարավոր ելքը ստեղծված «վտանգավոր» իրադրությունից՝ երևակայական սովետական սպառնալիքի պայմաններում։ «Տրումենի դոկտրինան» ընդունելուց հետո Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Նեջմեդդին Սադրը չհապաղեց հանդես գալու նրա գովաբանությամբ, այն գնահատելով, որպես «մեծ մխիթարություն Թուրքիայի ժողովրդի համար, որովհետև վերջինիս զգացնել էր տալիս, որ նա այլևս միայնակ չէ»[1]։

[1] Տե՛ս Altemur Kilic, Turkey and the World, Washington, 1959, p. 143.

Պետք է ասել, որ ամերիկյան հեղինակները, հատուկ ուշադրություն դարձնելով այս հարցին, փորձում են «հաստատել» «Տրումենի դոկտրինայի» համաձայն Թուրքիային ցույց տրված օգնության «անշահախնդիր» բնույթը և գործն այնպես ներկայացնել, թե իբր Ամերիկայի Միացյալ Նահանգները «փրկեցին» Թուրքիան սովետական ներխուժման վտանգից։ Այսպես, միջազգային հարաբերությունների պատմության հայտնի մասնագետ Ջորջ Լենչովսկին պնդում է, որ «1947 թվականի գարնանը... Թուրքիան լրջորեն վախենում էր դինված ինտերվենցիայից», ուստի և «պրեզիդենտ Տրումենը կոնգրեսին հղած իր հայտնի ուղերձով առաջարկեց օգնություն ցույց տալ Թուրքիային ու Հունաստանին՝ հաշվի առնելով նրանց անվտանգությանը սպառնացող սովետական լուրջ վտանգը»[2]։

«Կարելի է համարձակորեն եզրակացնել,—գրում է «Սովետական Միությունը և մահմեդական աշխարհը 1917—1958 թթ.» գրքում Այվոր Սփեքթորը,— որ Հունաստանն ու Թուրքիան 1947 թ. փրկվեցին բացառապես Միացյալ Նահանգների վճռական միջամտության շնորհիվ...»[3]։

Հայտնի պատմաբան Էմիլ Լենջիը նույնպես անհիմն կերպով պնդում է, թե իբր Թուրքիան 1947 թվականին ուժեղ ճնշման տակ էր, որովհետև «...Սովետներին ժամանակը թվում էր նպաստավոր՝ իրականացնելու համար էգեյան և միջերկրածովյան շրջանները ներթափանցելու Ռուսաստանի դարավոր իղձը»[4]։ Նման ձևով խեղաթյուրելով իրականությունը, հեղինակը ճգնում է «ապացուցել», որ «հենց այդ վտանգին ի պատասխան Միացյալ Նահանգների կառավարությունը հանդես եկավ պրեզիդենտական ուղերձով»[5]։ Նույնպիսի փաստագուրկ և ստահոդ պնդումներով են հանդես գալիս ամերիկյան, նաև անգլիական ու ֆրանսիական այլ հեղինակներ[6]։

Սովետական Միության կողմից Թուրքիային իբր սպառնացող «մշտական վտանգի» շինծու այս թեզն ընկած է նաև ժամանակակից թուրք պատմաբանների, քաղաքական գործիչների, մամուլի հայտնի տեսաբանների բազմաթիվ գրքերի ու հոդվածների հիմքում։ Ահա, օրինակ, ինչպես է բացատրում դեպի ԱՄՆ-ը կատարած Թուրքիայի շրջադարձը սովետա-թուրքական հարաբերությունների «մասնագետ» Հալյուկ Յուլմանը. «1945 թվականի կեսերից Սովետական Միությունը սկսեց Թուրքիայի վրա ուժեղ ճնշում գործադրել... Թուրքիան մի մեծ վտանգ զգաց և տնտեսական ու ռազմական տեսակետից ՍՍՌՄ-ի դեմ հանդիման միայնակ չմնալու համար 1939 թվականից իր դաշնակից Անգլիայի և 2-րդ համաշխարհային պատերազմի վերջին ամենաուժեղ պետությունը դարձած ԱՄՆ-ի աջակցությունը ստանալու ուղղությամբ սկսեց աշխա-

---

[2] George Lenczowski, The Middle East in World Affairs, Cornell University Press, Ithaka, New York, 1956, p. 147.

[3] Ivar Spector, The Soviet Union and the Muslim World 1917—1958. University of Washington Press, 1959, p. 297.

[4] Emil Lengyel, The Changing Middle East, New York, 1960, p. 269.

[5] Նույն տեղում, էջ 269—270։

[6] Dwight J. Simpson, Soviet Policy in the Middle East. „World Affairs Quarterly", vol. XXIX, № 1, April, 1958, p. 10; Arslan Humbaraci, Middle East Indictment, London, 1958, p. 47; Bernard Feron, Moscou—Ankara, „Le monde diplomatique". Paris, 1957, Novembre, p. 1.

տել»[7]։ Վերը հիշատակված Ալթեմուր Քիլիջը ևս ամերիկյան «օգնությանը» դիմելը բացատրում է երևակայական սովետական սպառնալիքով, որի պատճառով, ըստ հեղինակի «թուրք ժողովուրդը (?!) և թուրքական կառավարությունը այդ օգնությունը խանդավառությամբ ընդունեցին»[8]։ Նույն բանն է կրկնում պրոֆեսոր Ահմեդ Շյուքրյու Էսմերը՝ միաժամանակ ընդգծելով «Տրումենի դոկտրինայի» «բարոյական մեծ արժեքը», այն է, որ «աշխարհի ամենահզոր պետությունը, ամենամեծ դեմոկրատիան (?!) հետաքրքրվում է Թուրքիայի ճակատագրով»[9]։

Սակայն ո՞րն էր ՍՍՌՄ-ից եկող այդ սպառնալիքը։ Որպես դրա «ապացույց» թուրք հեղինակները վկայակոչում են նեղուցների ռեժիմի վերաբերյալ 1946 թ. օգոստոսի 7-ի և սեպտեմբերի 24-ի սովետական նոտաները։ Այսպես, Անկարայի զինվորական դպրոցներից մեկում քաղաքական պատմություն ավանդող Թահսին Յունալը այդ նոտաները համարում է «վերադարձ դեպի ցարիզմի քաղաքականությունը նեղուցների հարցում», դրանց երևան գալով բացատրելով Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ կատարված փոփոխությունները։

«Այդ էր պատճառը, գրում է Յունալը, որ մենք մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ խզելով թեքվեցինք դեպի դեմոկրատական աշխարհը»[10]։ Իսկ Քիլիջը, խոսելով օգոստոսի 7-ի նոտայում առաջ քաշված սովետական առաջարկների մասին, որոնք համապատասխանում էին առանց բացառության բոլոր սևծովյան պետությունների շահերին, գրում է, որ այդ սկզբունքները իսկական սպառնալիք էին թուրքական սուվերենությանը, ինչպես նաև «Թուրքիայի և մերձափնյա ու ոչ-մերձափնյա տերությունների միջև ստրատեգիական ծայրահեղ անհրաժեշտություն ներկայացնող նրբին հավասարակշռությանը»[11]։ Նման կեղծիքով են «հիմնավորում» իրենց տեսակետները նաև այլ հեղինակներ[12]։

Արդյո՞ք 1946 թ. սովետական նոտաները սպառնալիք էին ներկայացնում Թուրքիայի անվտանգությանը և ոտնահարում վերջինիս սուվերեն իրավունքները, ինչպես պնդում են թուրք հեղինակները։ Ամենևին ոչ։ Նման անհիմն մեղադրանքները ոչ մի առնչություն չունեն փաստերի, պատմական իրականության հետ։

Սովետական կառավարության հիշյալ նոտաները սովետական դիվանագիտության միակողմանի և կամայական ելույթները չէին, դրանք անմիջականորեն բխում էին երեք մեծ տերությունների՝ ՍՍՌՄ-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկավարների կողմից 1945 թ. հուլիսին Պոտսդամում ընդունված որոշումներից։

Ինչպես հայտնի է, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համաշխարհային հասարակական կարծիքին ակնհայտ դարձավ, որ Թուրքիայի

---

[7] Halük Ülman, Sovyetler Birligi ve Turk bogazları, „Forum", 1 ocak 1961, sayı 162, s. 6 (Ankara).

[8] Altemur Kilic, Turkey and the World, Washington, 1959, p. 142.

[9] Prof. Dr. Ahmet Şukru Esmer, Türk Diplomasisi (1920—1955), „Yeni Turkiye", Istanbul, 1959, s. 98.

[10] Tahsin Ünal, 1700 den 1958-e kadar Türk siyası tarih, Ankara, 1958, s. 291.

[11] Altemur Kilic, Turkey and the World, p. 129.

[12] Տե՛ս „Forum", I ocak 1961, sayı 162, s. 7.

կառավարող շրջանները, միանձնյա տնօրինություն անելով նեղուցներում և յուրովի մեկնաբանելով Մոնտրեի կոնվենցիան, պատերազմի տարիներին բազմիցս կոպիտ կերպով խախտել են հիշյալ կոնվենցիան, մասնավորապես նրա 19-րդ հոդվածը, որն օտարերկրյա բոլոր ռազմանավերին արգելում էր անցնել սևծովյան նեղուցներով[13]։ Այդ հանգամանքը հաշվի առնելով նույնիսկ ԱՄՆ-ի ու Անգլիայի կառավարությունները Պոտսդամի կոնֆերանսում ստիպված էին ընդունել, որ Մոնտրեի կոնվենցիան, այլևս անհամապատասխան լինելով ներկա ժամանակներին, պետք է վերանայվի և որ այդ ուղղությամբ կատարված հետևյալ քայլը կլինի հարցի քննարկումը հիշյալ երեք տերություններից յուրաքանչյուրի և Թուրքիայի միջև՝ անմիջական բանակցությունների միջոցով[14]։

Հիմնվելով Պոտսդամի կոնֆերանսի որոշումների վրա, սովետական կառավարությունը 1946 թ. օգոստոսի 7-ի նոտայով դիմեց թուրքական կառավարությանը, առաջարկելով վերանայել Մոնտրեի կոնվենցիան և մշակել նեղուցների այնպիսի նոր ռեժիմ, որը գործնականորեն կարողանար ապահովել սևծովյան բոլոր տերությունների անվտանգությունը։ Թվարկելով պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից Մոնտրեի կոնվենցիայի խախտման բազմամիլ դեպքերը, նոտայում ասվում էր.

«...Բերված փաստերից երևում է, որ Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ մղված անցած պատերազմի ընթացքում նեղուցների վերաբերյալ կոնվենցիան չխանդարեց թշնամական տերություններին նեղուցներն օգտագործելու ռազմական նպատակներով՝ ընդդեմ Սովետական Միության և դաշնակից այլ պետությունների, ըստ որում թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն չկրել նման վիճակի համար...»[15]։

Իր կողմից սովետական կառավարությունն առաջարկում էր նեղուցներում հաստատել նոր ռեժիմ, որի հիմքում լինեին ներքոհիշյալ հինգ կետերը.

1 Նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր երկրների առևտրական նավերի համար.

2 Նեղուցները միշտ պետք է բաց լինեն սևծովյան տերությունների ռազմանավերի համար.

3 Ոչ-սևծովյան տերությունների ռազմանավերի անցումը նեղուցներով, բացառությամբ հատուկ նախատեսված դեպքերի, պետք է արգելվի.

4 Նեղուցների ռեժիմի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սևծովյան մյուս երկրների իրավասության մեջ.

5 Թուրքիան և Սովետական Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու նրանց անվտանգությունն ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգռված տերություններ, համատեղ միջոցներով պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը ուրիշ տերությունների կողմից սևծովյան տերություններին թշնամական նպատակներով նրանց օգտագործումը կանխելու համար[16]։

---

[13] Տե՛ս „Дипломатический словарь в трех томах", т. II, М., 1961, стр. 313–314.

[14] Տե՛ս „Правда", 14.VIII.1946.

[15] Նույն տեղում։

[16] Տե՛ս նույն տեղում։

1946 թ. օգոստոսի 22-ի իր պատասխան նոտայում Թուրքական կառավարությունը ընդարձակ բացատրություններ էր տալիս նեղուցներով «առանցքի» երկրների ռազմական և ռազմա-օժանդակ նավերի անցման կոնկրետ դեպքերի առթիվ, որոնք տեղի էին ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Ըստ էության չհերքելով սովետական նոտայում բերված Մոնտրեի կոնվենցիայի խախտման փաստերը, Թուրքական կառավարությունը պնդում էր, որ թշնամական ռազմանավերի անցումը նեղուցներով իբր սպառնալիքի տակ չի դրել ՍՍՌՄ-ի անվտանգությունը։ Օգոստոսի 22-ի Թուրքական նոտայի պատասխանը հանդիսացող սեպտեմբերի 24-ի նոտայում սովետական կառավարությունը, անդրադառնալով վերոհիշյալ փաստարկներին, նշում էր, որ դրանք միանգամայն անհիմն են։

«Ինչ վերաբերում է նշված սպառնալիքի իրական չափերին, ասվում էր սովետական նոտայում, բավական է բերել այն փաստը, որ հաշվի առնելով նեղուցներով հակառակորդի ռազմական և ռազմական օժանդակ նավերի անարգելք անցման բազմաթիվ դեպքերը, Սովետական գերագույն հրամանատարությունը ստիպված էր պատերազմական գործողությունների թատերաբեմի գլխավոր ուղղություններից էական թվով զինված ուժեր տեղափոխել՝ սևծովյան շրջանը պաշտպանելու համար»[17]։ Հիշյալ նոտայում սովետական կառավարությունը ընդգծում էր նաև այն փաստը, որ Թուրքական կառավարությունը պատերազմի տարիներին «դադարեցրել էր նեղուցներով նավերի շարժման մասին զեկույցներ ներկայացնել պատերազմի մասնակից պետություններին, որը նա պարտավոր էր անել Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն»[18]։

Թուրք կառավարող շրջանների նման դիրքորոշումն ամենևին էլ չէր բխում Թուրքիայի ազգային պահանջներից։ Նեղուցների հարցում Թուրքիայի բռնած դիրքը լիովին ձեռնտու էր իմպերիալիստական խոշոր տերություններին և, առաջին հերթին, այդ ժամանակաշրջանում արդեն բացահայտ հակասովետական քաղաքականության անցած Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որոնք ոչ երկրորդական դեր խաղացին սովետական առաջարկները մերժելու գործում։ Այդ մասին ներկայումս խոստովանում են նույնիսկ թուրք հեղինակները։ Այսպես, օրինակ, նույն Յուլմանը 1946 թ. օգոստոսի 7-ի նոտայում առաջ քաշված հարցերին անդրադառնալով, գրում է. «Թուրքական կառավարությունը անգլիական և ամերիկյան կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո սովետական պահանջները մերժեց»[19]։

Ինչպես երևում է վերը բերված սովետական նոտաների բովանդակությունից, դրանք ոչ մի սպառնալիք չէին կարող ներկայացնել Թուրքիայի համար և առավել ևս՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արմատական փոփոխություն առաջ բերել։ Թուրք հեղինակների անհիմն, վերին աստիճանի միտումնավոր դնահատականներն այս հարցում ընդունելի չեն նույնիսկ Թուրքիայում։ Վերջերս, Անկարայում լույս տեսնող «Forum» արտաքին քաղաքական հանդեսում տպագրվեց թուրք ժուռնալիստ Ալի Քենանի «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը,

---

[17] „Правда", 28.IX.1946.

[18] Նույն տեղում։

[19] Տե՛ս „Forum", I ocak 1961, sayı 162, s. 7.

վերլուծելով հետպատերազմյան տարիներին թուրքական ղեկավար շրջանների վարած արտաքին քաղաքականությունը, հանգում է այն եզրակացության, որ միանգամայն սխալ է Թուրքիայի նոր կուրսը անմիջականորեն կապել Սովետական Միության քաղաքականության, նրա գիվանագիտական ելույթների հետ, որ գա բացատրվում է Թուրքիայում տիրապետող ուժերի պայքարով, իշխանության գլուխ անցած դասակարգի կենսական շահերով։ Մասնավորապես, խոսելով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին, հեղինակը գտնում է, որ դրանց խորը պատճառները պետք է փնտրել այն բանում, որ իշխանությունն իր ձեռքը վերցրեց հողային բուրժուազիան։ «Հակառակ դեպքում,—գրում է Քենանը,—կարելի է սխալի մեջ ընկնել, այդ շրջանում կատարված արտաքին քաղաքական փոփոխությունները բացատրելով 1946 թ. սովետական նոտաներով, ինչպես այդ անում են մեր մտավորականները, որոնք հաշվի չեն առնում դասակարգային ուժերի հարաբերության մեջ կատարված կարևոր փոփոխությունները»[20] (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։

Թուրքիայի կառավարող շրջանների երկրի ռազմականացման քաղաքականությունը, ամերիկյան իմպերիալիզմի կողմից գլխավորվող ագրեսիվ բնույթի բոլոր ռազմական խմբավորումներին Թուրքիայի ակտիվ մասնակցությունը ևս, ինչպես վերևում նշվեց, թուրք հեղինակները առանց որևէ փաստական հիմքի, վերագրում են «հյուսիսից սպառնացող վտանգին», դրանով իսկ արդարացնելով Թուրքիայի ազգային շահերին հակասող այդ քաղաքականությունը։

«Չնայած երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, գրում է Յուլմանը, սովետական ճնշումը հնարավորություն չէր տալիս իրագործելու պատերազմի ժամանակ խիստ մեծացած բանակների մի մասը կրճատելու և ազգային էկոնոմիկան նորից կարգավորելու ու զարգացնելու մեր ցանկությունը և Թուրքիան տնտեսական դժվարությունների գնով ստիպված էր իր բանակը պատերազմական ժամանակների մակարդակին թողնել»[21]։ Նույնպիսի շինծու փաստարկներով են խեղաթյուրում իրականությունը Քըլըջը, Յալմանը և այլ հեղինակներ։ Այսպես, խուսափելով բացահայտել երկրի ռազմականացման իսկական պատճառները, Քըլըջը պնդում է, թե իբր «Թուրքիան իր բյուջեի կեսը ծախսում է ազգային պաշտպանության վրա, որովհետև նա ռուսական վտանգին դեմ հանդիման է կանգնած»[22]։

Պրոֆեսոր Էսմերը ևս (որը քաղաքական տեսաբան է և հայտնի է Թուրքիայում որպես սովետա-թուրքական հարաբերությունների մասնագետ) առանց լուրջ փաստական հիմնավորման, փորձում է «համոզել» ընթերցողին, թե իբր Թուրքիան ստիպված էր ՆԱՏՕ-ի մեջ մտնել «բացառապես Ռուսաստանի դեմ պաշտպանվելու համար»։ Հեղինակի կարծիքով, առանց ՆԱՏՕ-ի մեջ ներգրավվելու «հնարավոր չէր լինի ապահովել երկրի անվտանգությունը»[23]։

---

[20] Տե՛ս „За рубежом", № 30 от 29.VI.1961 г., стр. 26.

[21] Haluk Ulman, Türk-Amerikan yakınlaşması ve Sovyetler Birliği. „Forum", 15 Şubat 1961, sayı 165, s. 12.

[22] Altemur Kilic, Turkey and the World, p. 142.

[23] Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Türk Diplomasisi (1920—1955). „Yeni Türkiye", Istanbul, 1959, s. 99.

ՍՍՌՄ-ի կողմից իբր Թուրքիային սպառնացող վտանգի մասին նման անհիմն պնդումները վկայում են, որ թուրք պատմաբաններն ու ժուռնալիստները չեն խորշում գործածության մեջ վերցնելու իմպերիալիստական ղեկավար շրջանների և հատկապես, ԱՄՆ-ի գաղափարախոսների կողմից համառորեն պրոպագանդվող «կոմունիստական սպառնալիքի» ու «սովետական ագրեսիայի» մասին զառամյալ կեղծիքը։ Սկսած այն ժամանակներից, երբ թուրքական կառավարող շրջանները երկիրը ծառայեցրին ամերիկյան իմպերիալիզմի հակասովետական ագրեսիվ նպատակներին, կարելի է խոսել ոչ թե Սովետական Միության կողմից, այլ, ընդհակառակը, Թուրքիայի տերիտորիայից ՍՍՌՄ-ին սպառնացող վտանգի մասին։ Այդ վտանգն իրական դարձավ 1952 թվականից, երբ Թուրքիան հոժարակամ կերպով մտավ Հյուսիս-ատլանտյան ագրեսիվ բլոկի՝ ՆԱՏՕ-ի մեջ, թեպետ նա իր գրաված աշխարհագրական դիրքով ոչ մի առնչություն չունի Ատլանտիկայի հետ։ Անցած տասը տարիների ընթացքում Թուրքիայի տերիտորիան տենդորեն վեր է ածվում ՆԱՏՕ-ի ռազմա-ստրատեգիական կարևորագույն հենակետի, երկիրը դարձել է այդ ագրեսիվ խմբավորման խոշորագույն հրթիռային բազաներից մեկը։ Ազգակործան այն քաղաքականությունը, որը շուրջ 10 տարի վարում էին իշխանության գլուխ կանգնած դեմոկրատական պարտիայի ներկայացուցիչները՝ Բայար—Մենդերեսի կառավարությունը, մեծ աղետներ պատճառեց ամբողջ թուրք ժողովրդին։ Այժմ, Մենդերեսի կառավարության տապալումից հետո, թուրք հասարակության առաջավոր ներկայացուցիչները համարձակվում են բացեիբաց գրել այն մասին, որ թուրք նախկին կառավարողների քաղաքական հետադիմական գիծը «հակասել է Թուրքիայի ազգային շահերին», «մեծ վնաս է հասցրել ազգային արդյունաբերությանը», «ազգային արժանապատվությանը» և այլն։ Վերը հիշված թուրք ժուռնալիստ Ալի Քենանն իր հոդվածում եզրակացնում է, որ դեմոկրատական պարտիան վարում է պատերազմի ու ագրեսիայի քաղաքականություն։ «Դեմոկրատական պարտիան,—գրում է հեղինակը,— մտավ կորեական պատերազմի մեջ, որը Ամերիկան սկսել էր տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար։

Չճանաչելով ազգերի ինքնորոշման իրավունքը, դեմոկրատական պարտիան անցավ գաղութարարների կողմը՝ ընդդեմ իրենց ազատագրության համար մարտնչող ճնշված ժողովուրդների։ Միավորված ազգերի կազմակերպությունում նա մեծագույն եռանդով հետևում էր գաղութարարների ցուցումներին։ Բանդունգի կոնֆերանսում նա գաղութարարների ներկայացուցիչն էր։ Նա իր վրա վերցրեց գաղութարարների շահերի պաշտպանությունը Միջին Արևելքի արաբական ժողովուրդների դեմ մղվող նրանց պայքարում...

Դեմոկրատական պարտիան բլոկներից մեկի հետ դաշինք կնքեց։ Նա ենթարկվում էր այդ բլոկի բոլոր պահանջներին, որոնք բխում էին ՆԱՏՕ-ի, Բաղդադի պակտի և ՍԵՆՏՕ-ի նկատմամբ նրա պարտավորություններից։ Զբաղվարարվելով այդ պակտերով՝ գաղութարարների հետ համատեղ շահերն ապահովելու գործում, նա երկկողմանի համաձայնագիր կնքեց Ամերիկայի հետ։

Բոլոր երկրների և հատկապես հարևան երկրների նկատմամբ բարեկամության և բարիդրացիական հարաբերությունների փոխարեն դեմոկրատական պարտիան այդ երկրների նկատմամբ սկսեց վարել իսկական ագրեսիայի և

բշնամանքի բաղաքականություն... Նա երկիրը վերածեց մեր հարևանների դեմ ուղղված Արևմուտքի ռազմական բազայի»[24] (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։

Հասկանալի է, որ արևմտյան իմպերիալիստների հակասովետական բաղաքականությունն անվերապահորեն պաշտպանելու և Թուրքիայի տերիտորիան միջուկային պատերազմի թատերաբեմ դարձնելու անհեռատես կուրսը, որը հետևողականորեն անց են կացնում թուրքական կառավարողները, ոչ մի կերպ չի կարող նպաստել սովետա-թուրքական հարաբերությունների բարելավմանը, ընդհակառակը, մեծապես խանգարում է այդ նպատակի իրականացմանը։ Թուրք պատմաբանները, սակայն, գիտակցորեն խեղաթյուրում են իրական պատկերը։ Այսպես, պրոֆ. Էսմերը պնդում է, որ ՆԱՏՕ-ին և ագրեսիվ այլ խմբավորումներին Թուրքիայի մասնակցությունը «լուրջ վնաս չի հասցրել սովետա-թուրքական հարաբերություններին»[25]։

Եվ այդ այն ժամանակ, երբ նույնիսկ թուրքական մամուլը աներկիմաստ ձևով խոստովանում է Արևմուտքի հետ Թուրքիայի համագործակցության բուն նպատակները։ Այդ տեսակետից ուշագրավ է թուրքական ազդեցիկ «Աքշամ» թերթում 1959 թ. հունվարին տպագրված հոդվածը, որի հեղինակը պարծենկոտ կերպով գրում է հետևյալը. «Արևմտյան մասնագետները սովետական սահմանները զննելուց հետո եկան այն հետևության, որ հրթիռների արձակման ամենահարմար շրջանը Թուրքիան է. ջրածնային ռումբերը, որ կնետվեն մեր տերիտորիայից, կարող են ոչնչացնել ողջ Ուկրաինան և Կովկասը։ Հենց դա է պատճառը, որ ամերիկացիներն այդման ուժեղ հետաքրքրվում են մեզնով» (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։

Եվ իրոք, Թուրքիան ԱՄՆ-ին հետաքրքրում է, առաջին հերթին, որպես հակասովետական ստրատեգիական կարևորագույն հենակետ, որպես դաշնակից ամերիկյան իմպերիալիզմի պատերազմական ծրագրերի իրականացման գործում։

Ամերիկյան պատմաբան Ջոն Քեմփբելը ուղղակի խոստովանում է. «ԱՄՆ-ը Թուրքերին օգնում են ոչ թե այն պատճառով, որ վերջինիս գյուղատնտեսությունը տրակտորների կարիք ունի, այլ որովհետև թուրքերը կայուն դաշնակիցներ են...»[26] (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)։

Սովետական կառավարությունը Թուրքիայի ղեկավար շրջանների ուշադրությունը բազմիցս հրավիրել է իմպերիալիստական ագրեսիվ խմբավորումներին մասնակցելու նրանց քաղաքականության լուրջ հետևանքների վրա։ Դեռևս նախքան Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալը, 1951 թ. նոյեմբերի 3-ի իր հայտարարության մեջ Սովետական կառավարությունը մերկացնելով այդ ագրեսիվ ռազմական խմբավորման հակասովետական բնույթը, ընդգծում էր, որ «Ատլանտյան բլոկի կազմում Թուրքիայի ներգրավումը, որն ի դեպ, Ատլանտիկայի հետ ոչ մի առնչություն չունի, չի կարող նշանակել այլ բան, բան իմպերիալիստական պետությունների ձգտումը՝ թուրքական տերիտորիաս օգտագործել Սովետական Միության սահմանների մոտ ագրեսիվ նպատակներով ռազմական բազաներ ստեղծելու համար»[27]։ ՆԱՏՕ-ի մեջ մտնելուց հետո,

---

[24] Տե՛ս "За рубежом". № 30 от 29.VII.1961 г., стр. 26.
[25] Prof. Dr. Ahmet Şükrü Esmer, Turk Diplomasisi, s. 102.
[26] John Campbell, Defense of the Middle East. New York, 1958, p. 266.
[27] „Правда", 4.XI.1951.

շատ կարճ ժամանակում Թուրքիան դարձավ նրա գրեթե ամենաագրեսիվ տրամադրված պետությունը, որն առանց տատանումների ոչ միայն մինչև վերջը պաշտպանում է այդ ռազմական բլոկի բոլոր պատերազմական միջոցառումները, այլև ինքն է հանդես գալիս սպառազինություններն արագացնելու առաջարկներով։ Այդ առթիվ Թուրքիայի պրեմիեր-մինիստր Մենդերեսին ուղղված Սովետական կառավարության 1958 թ. հունվարի 12-ի ուղերձում նշվում էր, որ ՆԱՏՕ-ի 1957 թ. դեկտեմբերյան սեսիայում թուրքական կառավարությունն ամենաագրեսիվ դիրքն էր գրավել ինչպես իր հարևանների նկատմամբ, այնպես էլ միջազգային ընդհանուր հարցերում՝ ամբողջությամբ վերցրած։ Հենց թուրքական պատվիրակության կողմից էին լսվում կոչեր ուժեղացնելու սպառազինությունների հետագա մրցավազքը և ՆԱՏՕ-ի բոլոր երկրներին, այդ թվում և Թուրքիային մատակարարելու օտարերկրյա միջուկային և հրթիռային զենքով»[28]։

Սովետական կառավարությունը դեռևս Մենդերեսի օրոք կոնկրետ քայլեր է ձեռնարկել սովետա-թուրքական հարաբերությունները նորմալացնելու և բարելավելու ուղղությամբ։

Այսպես, 1957 թ. ապրիլի 22-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի անունից Միության սովետի նախագահ Պ. Պ. Լոբանովը և Ազգությունների սովետի նախագահ Վ. Տ. Լացիսը դիմեցին Ազգային մեծ ժողովի նախագահ Ռեֆիկ Քորալթանին հետևյալ նամակով. «Նկատի ունենալով սովետա-թուրքական պառլամենտական կապերի հաստատման ցանկալիությունը, որը կարող է նպաստել ՍՍՌՄ-ի և Թուրքական Ռեսպուբլիկայի ժողովուրդների հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գերագույն սովետը պատիվ ունի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի դեպուտատների մի պատվիրակության և անձամբ Ձեզ, պարոն նախագահ, հրավիրել 1957 թվականին այցելել Սովետական Միություն՝ Ձեզ և պատվիրակության համար հարմար ժամանակ։

ՍՍՌՄ Գերագույն սովետը հույս է հայտնում, որ Թուրքական մեջլիսի դեպուտատների այդպիսի ուղևորությունը կօգնի Սովետական Միության և Թուրքական Ռեսպուբլիկայի միջև բարիդրացիական հարաբերություններ զարգացնելու վսեմ նպատակներին»[29]։

Թուրքական կառավարությունն ընդունեց այդ հրավերը, սակայն հետագայում այն անպատասխան թողեց։

Նույն 1957 թ. հուլիսին Անկարայում սովետական դեսպան Ռիժովը սովետական կառավարության հանձնարարությամբ թուրքական կառավարությանը պաշտոնական առաջարկություն արեց ՍՍՌՄ-ի և Թուրքիայի պետական գործիչների միջև անձնական կոնտակտ հաստատելու վերաբերյալ՝ սովետա-թուրքական հարաբերությունների վիճակի մասին մտքերի փոխանակություն կատարելու և փոխադարձ առաջարկները, այդ թվում տնտեսական համագործակցության հարցը, քննարկելու համար։ Սովետական Միության այս նախաձեռնությունը ևս Մենդերեսի կառավարության կողմից պատշաճ ուշադրության չարժանացավ։

---

[28] „Правда", 14.I.1959.

[29] «Սովետական Հայաստան», 26 ապրիլի, 1957։

1957 թ. սեպտեմբերի 11-ին Մենդերեսին հանձնվեց ՍՍՌՄ Մինիստրների խորհրդի նախագահի ուղերձը՝ Սիրիայի դեմ ԱՄՆ-ի և Թուրքիայի կողմից նախապատրաստվող ներխուժման հետևանքով Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծված լարված դրության մասին։

Սեպտեմբերի 30-ի իր պատասխան ուղերձում անդրադառնալով սովետա-թուրքական հարաբերություններին, թուրքական կառավարությունը դրանց բարելավման համար յուրահատուկ մի պայման էր առաջ քաշում, այն է, որ սովետական կառավարությունը հրաժարվի իր մերձավորարևելյան քաղաքականությունից, այսինքն այդ շրջանում խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու համար մղած իր հետևողական պայքարից, իրենց անկախության համար գաղութատիրության դեմ արաբական երկրների պայքարին ամեն կերպ աջակցելու ջանքերից։

«Թուրքական կառավարությունը ցանկանում է,—նշվում էր սովետական կառավարության 1957 թ. նոյեմբերի 22-ի ուղերձում,—որպեսզի Սովետական Միությունը հրաժարվի Մերձավոր և Միջին Արևելքում վարած իր քաղաքականությունից։ Սակայն ի՞նչ նա ի նկատի ունի տվյալ դեպքում։ Ցանկանո՞ւմ է արդյոք թուրքական կառավարությունը, որ Սովետական Միությունը դադարի աջակցել իրենց անկախությունն ու սուվերենությունը արտաքին ոտնձգություններից պաշտպանող արաբական ժողովուրդների արդարացի ազգային իղձերին։ Ցանկանո՞ւմ է արդյոք նա, որ ՍՍՌՄ-ն դադարի նպաստել նրանց պետական ինքնուրույնությունն ամրապնդելուն։ Զգտո՞ւմ է արդյոք նա, որ Սովետական Միությունը հետևի մի քանի գաղութային երկրների քաղաքականությանը և, օրինակ, խզի առևտուրը Սիրիայի և Եգիպտոսի հետ... թե՞ Թուրքիայի կառավարությունն ուզում է, որ Սովետական Միությունն օգնություն ցույց տա արևմտյան երկրներին՝ գաղութարարների նպատակներին ծառայող Բաղդադի ռազմական խմբավորման մեջ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին ներքաշելու նրանց փորձերում...»։ «Եթե այդ է նկատի առնվում,—ասվում էր այնուհետև սովետական նոտայում,—արդյո՞ք չափազանց շատ բան չեն ցանկանում Սովետական Միությունից որպես պայման սովետա-թուրքական բարեկամությունը վերականգնելու համար...»[30]։

Ինչպես երևում է փաստերից, սովետական կառավարության նախաձեռնությունը՝ սովետա-թուրքական հարաբերությունները բարիդրացիական դարձնելու ուղղությամբ անպատասխան մնաց և արձագանք չգտավ թուրքական կառավարող շրջանների կողմից։ Անդրադառնալով այս հարցին, թուրք հեղինակները որպես «դրական» երևույթ են ներկայացնում այն փաստը, որ Թուրքիայի կառավարությունը ոչ մի քայլ չի կատարում ՍՍՌՄ-ի հետ հարաբերությունները նորմալացնելու համար։

«Թուրքական ղեկավարները՝ Բայարը և Մենդերեսը,—գրում է Քըլըջը,—իրենց բազմաթիվ հրապարակային ելույթներում հասկանալի դարձրին, որ իրենք չեն դայթակղվի տնտեսական ու ֆինանսական օգնության սովետական առաջարկներով։ Թուրքիան նույնիսկ չպատասխանեց սովետա-թուրքական առևտրական հարաբերություններն ընդլայնելու առաջարկներին»[31]։

---

[30] „Правда", 27.XI.1957.

[31] Altemur Kilic, Turkey and the World, p. 204.

1960 թվականի մայիսյան հեղաշրջման հետևանքով իշխանության եկած Գյուրսելի նոր կառավարության արտաքին քաղաքականությունը, ինչպես ցույց են տալիս փաստերը, էապես ոչնչով չի տարբերվում Թուրքիայի նախկին ղեկավարների հակազգային, երկրի համար կործանարար քաղաքականությունից։ Թուրքիան շարունակում է ամենաակտիվ մասնակցությունն ունենալ ագրեսիվ ռազմական խմբավորումներում՝ ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի մեջ. Թուրքիայի նոր ղեկավարները բազմիցս աներկիմաստ հայտարարություններ են արել այն մասին, որ իրենք ամենևին էլ մտադիր չեն չեզոք քաղաքականություն վարելու՝ հրաժարվելով երկիրը ծառայեցնել ռազմական ագրեսիվ նպատակներին։ Այսպես, 1961 թվականի հուլիսին թուրքական պետության ղեկավար դեներալ Գյուրսելը հունական «Հելլի պոստ» թերթին տված ինտերվյուի մեջ, անդրադառնալով Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, ընդգծել է. «Չի կարող խոսք անգամ լինել այն մասին, որ երկիրը չեզոք քաղաքականություն վարի։ ՆԱՏՕ-ի շրջանակներում Ամերիկայի և Արևմուտքի այլ տերությունների հետ Թուրքիայի համագործակցությունը կազմում է նրա արտաքին քաղաքականության հիմքը»[32]։

1961 թ. նոյեմբերի ընտրություններից հետո իշխանության գլուխ անցած Իսմեթ Ինոնյուի կառավարությունը շարունակում է հետևել Թուրքիայի նախկին կառավարողների կողմից անցկացվող արտաքին քաղաքական կուրսին։ Հատկանշական է պրեմիեր-մինիստր Ինոնյուի այն հայտարարությունը, որ նա արել էր նախքան կառավարության գլուխ անցնելը։ Իր ելույթներից մեկում անդրադառնալով իր գլխավորած ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիայի քաղաքական պլատֆորմին, Ինոնյուն ընդգծել էր. «Ես լսել եմ, որ օտարերկրացիներին ասում են այն մասին, որ եթե ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիան իշխանության հասնի, նա չեզոքության քաղաքականություն կվարի։ Այդ խոսակցությունները բացարձակ կեղծիք են։ Այդ մե՛նք սկսեցինք համագործակցության քաղաքականություն վարել. 1939 թվականին Անգլիայի ու Ֆրանսիայի, իսկ 1947 թվականին՝ Ամերիկայի հետ։ Մենք իշխանությունը թողեցինք նախքան այն մոմենտը, երբ սկսվեց ՆԱՏՕ-ի էվոլյուցիան 1952 թվականին, այն ստադիայում, երբ կենսագործվում էր Տրումենի դոկտրինան։ Այդ ժամանակից ի վեր մենք հավանություն ենք տալիս ու պաշտպանում Թուրքիայի դիրքը, որպես ՆԱՏՕ-ի հավատարիմ դաշնակցի և Ամերիկայի նվիրված բարեկամի»[33]։

Եվ իրոք, իշխանության գլուխ անցնելուց հետո Ինոնյուի կառավարությունը արտաքին քաղաքականության ասպարեզում ամբողջությամբ հետևելով Թուրքիայի նախկին ղեկավարների անցկացրած դծին վարում է ագրեսիվ տերությունների հետ այնպիսի «համագործակցության» քաղաքականություն, որը Բայար—Մենդերեսի կառավարությանը հասցրեց քաղաքական ամոթալի կրախի։

---

[32] Տե՛ս «Սովետական Հայաստան», 22 հուլիսի, 1961։

[33] Տե՛ս „За рубежом", № 30 от 29.VII.1961 г.